

# ՅԱԻԵԼՈՒԱԾ

Բ Ա Ջ Մ Ա Ղ Ի Պ Ի 1897 Օ Գ Ո Ս Տ Ո Ս Բ Ե Բ Թ Ի Ե

## ԻՍ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

### ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒԾ

(Տղամարտիակներ)

#### Ա

#### ՀԱՅՐԵՆԵՔԻՑ ԴՈՒՐՍ ԵՒ ԱՐԱՔՍԻ ԱՓԵՐՈՒՄ

(Շար. էջ. 262)

#### II.

Երկաթուղով անցնելով Թիֆլիսից Աղբա-  
 տափայի կայարանը, այնտեղից սկսած մինչև  
 ուսու-պարսիական սահմանադրուի շարունա-  
 կեցի նանապարհը Երբեմն չիտի է երբեմն պո-  
 տայի սայլակներով: Ճանապարհին ինչ նան,  
 դիպած տեղերն են՝ Ղազարի գաւառը իր շրջա-  
 կայ գիւղերով, Գիւրջանը և Գիւրջանի անտա-  
 ուսպատ ձորը, Սեմեոնովկա ուստիան փոքրիկ  
 գաղթականութիւնն, որ մի է նոյն ժամանակ  
 ծառայում է իբր պոստային իջեան, Չիբուխու  
 մեծ հայաբնակ գիւղը, Յամաբարիք անու-  
 նով փոքրիկ հայաբնակ գիւղը, երեսուն ան-  
 շաք խրճիթներից բաղկացած, ուղղի զետե-  
 դուած Սիւանայ ընի եզրին, Գեղամայ գե-  
 ղածիծաղ ծովախիլ կամ Սիւանայ լիճը, որի  
 համեատ կղզու վրայ կայ մի և վանաստան և  
 գեղեցիկ տեսքով և վայելուչ շինութեամբ Թ-  
 րեք տնտեսներից բաղկացած, Էլենովկա,

Քանարեո՝ Խ. Արտեանցի, և վերջ Հայաս-  
 տանի » անմահ հեղինակի հայրենիքը, ապա  
 Երեսան և Արարատեան դաշտի վրա այցելեցի  
 վաղարշագոտա՝ սուրբ Էջմիածնայ տե՛նոը,  
 մեր վիպասան Պերն Պոռչեանցի հայրենի  
 գիւղը—Աշտարակ, Արագած և Մոսիս պատ-  
 մական բարձր սպիտակափոս ձիւնագոտա լեռ-  
 ները, այնուհետև մինչև Հին-Նախիջեան՝  
 Սուրմալուի, Ղամաղուի և այլ բազմաթիւ  
 գիւղեր, յետոյ և Շարուր » դաշտի շարու-  
 նակութեան վրա պատմական Հին-Չուղան,  
 Չուլֆան, ուսու-պարսիական կարատիք և Ա-  
 բաքս գետը, միայն իրտիրը չը կարողացայ  
 տեսնել: Գալթէ՛՛ կամ Թաւրիզ անցնելու  
 համար ես ուղղակի Չուլֆա չը գնացի, այլ  
 մի քանի օր մնալով Հին-Նախիջեանում, իմ  
 առաջնօրը գիւղացուն խնդրեցի տանել ինձ  
 Հին-Չուղա, որ գտնուում է Արագսի ափին,  
 ուսական հողի վերջաւորութեան վրայ, ուս-  
 \*\*\*

պարսկական սահմանագծին մօտ : Այնտեղից ես ինքս կարող էի առանց առաջնորդի գնալ ի Զուլֆա<sup>1</sup>, ուր սեղի է ունենում անցազորերի ու մարայային սուրբերի զքննութիւնը : Նախիջևանից մօտ 35 վերստ անկանոն ճանապարհներով շարունակելով մեր ընթացքը, հասանք Հին-Ջուղայի գիւղացոց արտերի սահմաններին : Քառորդ ժամ անցնելով վարելահողերի միջով կամաց կամաց մօտեցանք գիւղին : Հետաքրքրութիւնից շարժուած, իմ առաջնորդ գիւղացուն սկսեցի հարց ու փորձ անել այդ գիւղի անցեալի և ներկայի մասին : Նա մօտ 70 տարեկան ծերունի լինելով, ինչպէս երևում էր, տեղեակ էր շատ պատմական անցքերի և բաների, միևնոյն ժամանակ՝ չնայած խորին ծերութեանը՝ նա ոտքից շատ թեթև էր, հետիոտն այնպէս էր հետեւում ինձ՝ ձիաւորիս, որ կարծես յօդնելը նրա համար չէր առուած :

— « Տեսնում ե՞ս, ազա՛, — ասաց նա մատով ցոյց տալով դէպ ի Զուլայի կողմը, — այն փոքրիկ ժայռոտ լեռան ստորոտի կրծքին, Արաքսի ափին, Հին-Ջուղան է, որի մասին, թէ որ ականջ դնել կ'սխորժես, հետաքրքիր բաներ կը պատմեմ քեզ » :

Արգարև, նա պատմեց մի շարք խոր տըպաւորութիւն թողնող անցքեր, որոնց մի կարևոր մասը հարկաւոր եմ համարում բերել այստեղ գէթ համառօտակի :

— « Հին-Ջուղան, — պատմել սկսեց առաջնորդ գիւղացին, — ի հունմն եղել է մեծ, անուանի, ամենափարթեմ գիւղաքաղաք բանդաթիւ բնակիչներով, երևելի իշխաններով և փառանքող շինութիւններով » :

— « Ըստ երևոյթին գիւղը աւերակ է, աննախանձելի, — նկատեցի հեռուից ես » :

— Այո՛, — պատասխանեց գիւղացին, — և եթէ նա այսօր նուաստացած է իր նախնի փառքից, փարթամութիւնից ու ճօխութիւնից, ընկած է իր նշանաւոր դիրքից և զարձել է փոքրիկ, աննշան գիւղ, այդ պէտք է վերա-

գրել Շահ-Աբաս Պարսից արքի բարբարոսական գործողութեանց ակուր եղանակներին, նրա արածութիւններին, աւերածութիւններին, մասնաթել մարդախոլիսող գազանութիւններին : Այո՛, պատմական փաստերը մինչև այսօր էլ ցոյց են տալիս, թէ ինչ կրակների ու պատահարների միջից է անցել, ինչ փորձանքների ու տառապանքների է ենթարկուել այդ խեղճուկ գիւղը : Գու շուտով կը տեսնես, ազա՛, այնտեղի նշանաւոր գերեզմանատան մէջ ամփոփուած խաչարերի, դամբարանների վրա գեղաքանդակ արձանազրութիւններ, բեւազարեր և ծխի մխիթ մէջ թաղուած, անհետացած աւերակների հնութիւնները, որոնք, ինչպէս պատմական գծադղ դէպքերի ու անցքերի անխօս, լռիկ ականատես վկաներ, աչքիդ առաջ պիտի ցոյց տան ու պատկերացնեն մինչև այսօր էլ երկաթի աւերող ձեռքի տխուր հետքերը, աւերակների մնացորդ փշրանքները... » :

— « Եւ կեցցէ՛ գիւղ, որ կարողացել է դեռ կանգուն մնալ մինչև այժմ իր աւերակների հիմանց վրա, աւելորդ ես : Պատմի՛ր, բարի գիւղացի, թէ ինչ շարժառիթներիցն է առաջ եկել այդ գիւղի գլխաւոր թշուառութեան աղբիւրը » :

— « Շահ — Խոստաբանպէն թաղաւորի որդի Շահ-Աբաս առաջինի այն յայտնի, նպատակաւոր դիտաւորութիւններից, որ մըտածում էր մի կերպ հնար գտնել Հին-Ջուլայի բնակիչներին տեղափոխելու և զառթեցնելու Պարսից աշխարհը : Իբրաւորուած նպատակին հասնելու համար նա չը խնայեց մի շարք աննկարարելի գազանութիւններ, անգթութիւններ ուղղուած դէպ ի խեղճ, անպաշտպան հայ ժողովուրդը : Բարբարոսական և բռնակալական ոյժերի ճնշման հարկադրութեան տակ, ինկիւզացիական տանջանքներ տալով, զինու զօրութեամբ ստիպում էր ժողովրդին չուել Սպահան իր բնիկ հայրենիքից... այդ ժամանակները Ջղալօղլի Սարգաբը առաջին անգամ կառայի արշաւանք էր սկսել Երևանի և երևանեան նահանգի վրա : Նա լրտեսներ ուղարկեց Ջուղա խուզարկելու դիտումով, այնտեղի վրա էլ յարձակողական պատրաստութիւն

1. Հին-Ջուլայից մինչև Զուլֆա մօտ 8 վերստ է, որ կարելի է և ոտով դնալ Արաքսի ուղղութեամբ :

ներ տեսնելու համար: Երբ լրտեսները լուր բերին Չղալոյի Սարգսիին, թէ Պարսից պատերազմական զինուորների ձեռքով հրդեհուած տեսան ամրոյջ Չուղան, ուր շինութիւնները մլած, ծխած ամխային մեխակոյտեր էին ներկայացնում, այն ժամանակ Սարգսը իր ուսմանդասական ընթացքը փոխեց և պատերազմ մղեց ու Չուղ տուեց որք իր կողմերին: Թահմազդուլի բէգ անունով զորսպետը, ստանալով Շահ-Աբաս թագաւորից մի հրովարտակ — հրամանագիր, եկել էր Չուղայի մտա բանակ հաստատել: Շահ-Աբասը այդ հրովարտակով տուել էր նրան լիազօրութիւն չը թողել Չուղայում ոչ մի բնակիչ, բայտրին էլ քչի Պարսկաստան և Թահմազդուլի բէգը պայով Չուղա, կանչում է իսկոյն առաջ իշխաններին և յայտնում նրանց թագաւորի բարձրագոյն հրամանը, սպանալով, որ հակառակ զէպքում մեծ կոտորած, արարափելի արհեստանգութիւն կը լինի: Իշխանները առնելով Թահմազդուլուց Շահի հրովարտակը, հուաբեցին ամբողջ միասեղ և անմեղ ներկայութեամբ բարձրաձայն կարգային: Հրովարտակում գրուած էր, որ Չուղայեցիք պէտք է թողնէին տուն, տեղ, անշարժ կայք, ամեն բան և զաղժէին Սպահան: Այնուհետև Թահմազդուլին մուսեախներ ուղարկեց Չուղայի ամեն կողմը՝ ժողովրդեան ամեն խւերում « Վառ » գտալով ժանուցանելու, որ պատրաստ լինէին զուրս քայլա իրանց բնակատեղիերից, չուել զէպ ի Պարսկաստան: « Դրա համար, — գրուած էին մուսեախները — Շահ-Աբաս թագաւորը ձեզ ամենիդ և բոք օր ժամանակ է տալիս, ուլ համարձակութիւն կ'ունենայ խախտել այդ պայմանաժամը, նա չարարք մանով կը ջնջուի, նրա ինչը կը յափշտակուի, գոտիք Արքայից արքային կը տաբուէ » • Ժողովոյի մէջ մեծ սոսկում աւարածուեցաւ: Չը դիտէին ի՞նչ անել, մնացել էին ջրի, կրակի արանքը: Եթէ զբերէին Շահի հրամանը, չունէին ոյժի կողմից պատրաստութիւն զիմացրելու, սրի կ'անցնէին: Իսկ եթէ լսէին ծանր էր իրանց համար թողնել հայրենիքը և գաղթել օտար, անժանութ աշխարհ:

« Գժուարութիւնը կայանում էր նախ այն

բանի մէջ, որ սուղ էր տրուած ժամանակաւ միջոցը — երբ օր, երկրորդ իրատում կամ հրովարտակում Շահ-Աբասի յայտնած հրամանը շատ և յանկարծակի լինելով, ժողովուրդը չէր կարողանում հետեւել զբառներ և բեռնակիր անասուններ՝ իրանց հետ սանելու ինչը, շարժական կայք, ստացուածք և իրեղէններ: Իշխանները և հովտրական զասը շարունակ զիջեց-ցերեկ խորհրդակցում էին ժողովոյի հետ՝ վերահաս անխուսափելի վրտանգից ազատուելու համար: Վերջը եկան այն եզրակացութեան, որ չկար փրկութեան ոչ մի հնար, բայց եթէ միայն հետեւել և հնազանդուել կուրորէն Շահ-Աբասի հրամանին ու կամքին, որովհետև մաղոց լսած ունէին բունակալի երկաթի ձեռքի զօրութիւնը, նրա վրէժխնդրական անզուսպ ոգին... Այդ իսկ պատճառով, երկիւղի տակ ճշնշուած, Չուղայեցիք պատրաստուեցան, թէ և կամայ-ակամայ, գաղթել Պարսկաստան: Ընդհանուր ճանապարհի համար պատրաստութիւններ կը տեսնէին, վրա հասաւ և կողմնակի զբարութիւն: Երջակայ զիջեցրում ապրող մահմետական ազգաբնակութիւնը, լրտակով Չուղայեցուց չուելը Սպահան, կամեցան պատեն հանգամանքներից օգտուիլ: Նրանք միանալով Թահմազդուլի բէգի Պարսից զօրքի հետ՝ երկուստեք սկսուեց Չուղայում իսկական հարստահարութիւնը, յափշտակութիւնը: Նրանք անխնայ թալանում-կողոպտում էին բնակիչներին և տակն ու վրա անում ամեն բան: Անկարգաբերել էր այդ ժամանակ և քրիստոնեաների կոտորածը: Արքայօք ի՞նչ վիճակի մէջ կը լինէին այն ծեր կանայք և տղամարդիկ կամ թուրակազմ հրանդներ, որոնք ոչ շարժուել կարող էին, ոչ էլ առաւ երթալ: Խեղճեր, զիշխանաձ Պարսիկ սրբը շողշողում էին նրանց գլխի վրայօք, գառների նման մայմայելով ազի ողորմ արտասուբի ձայներով լայնում էին սար ու ձոր: Ամեն տեղ կողոպուտ, աւերանք, հրդեհ, մորթուիչ մարդկանց, պղծումն եկեղեցիների, գերեզմանների ու դամբարանների: Պարսից զինուորները մի կողմից, և մահմետական ազգաբնակութիւնը միւս կողմից, կորցրած հաւատ, գութ և ազատ խղճի

համազմունք, բռնաբարութիւն էին առանց այն էլ անտէր ազգի բռնաբարութիւն իրաւունքները . . . : Վէյն այն ապկին, որ աշխարհումս անաւեր է » . . . :

Վերջին խօսքի վրա ձերուկ ուղեկիցս հռուստեց եւ աչքերը ջրակալեց արտասուրի կաթիլներով :

— « Աղա՛, — ասաց նա՝ յանկարծ սրտամութեան թիրք ընդհատելով եւ զանուշով զկայի ինձ, — երանք թէ գիտե՛նում մեր խեղճ հայ ազգի էս աստապանքներին, էս շարձարանքներին, նրբ կը լինի վերջ . . . » :

— « Յոյս տնեցիր, սիրելի զիւրացի, յայն է, որ ապրեցնում է մարդու : Մի ազգ, որ անեցել է հնումն թագաւորութիւն, փառք ու պարծանք եւ քրիստոնէական վարդապետութիւն, երբէք չե՞մ կործում, թէ Աստուած կամենար աշխարհից վերացնել նրան ինչպէս ձիւն : Մի ազգ, որ այսօր ձգտում է գէպի ի ազատութիւնը, ցանկանում է տեսնել իր ստանալաւած իրաւունքների վերականգնում, անշուշտ կը հասնէ իր նպատակին, իր երազած օրերին, որովհետեւ, որքան հալածում, այնքան տարածում . . . : մե՛նք, մե՛սը, ամպստ օրերին միշտ կը հետեւին պարզ օրեր, զա ընական օրէնք է : Մի թէ կարծում ես թշուառ են մի միայն այն մարդ մնար ազգութիւնները, որ կորցնելով իրանց նախկին փառքը, իրաւունքը, անկախութիւնը, պանու՛մ են այժմ զամապան տիրապետող իշխանութիւնների ձեռքում եւ ասուսպում են օտար լծի տակ, ո՛չ, Վ ամենալիշտաւաններն են այն տէրութիւնները, օրսնց խնամիները մէջն են » :

Այս ձերուկու ուշադրութիւնը դարձրի Հայոց պատմութեան մի քանի երեւելի անցքերի վրայ, բացատրեց նրան համառօտ կերպով նաև Մլաւոնական ազգի կրած ինկլիզիցիական տանջանքները իրանց զարհուրելի, բայց նախանձելի ու բարեբար հետեանքներով, և նրբա ձեռք առած միջոցները գէպի ազատական խնդիրը : Բոլզարիական ազգի պատմութիւն, ներքից յետոյ, նոյնպէս համառօտ կերպով, անցայ Չերնոգորիայի, Ռումանական, Սերբիական, Աւստրիա-Ունգարական, Յունաստանական և Ֆրանսիական ազգերի յե-

ղափոխական շարժումներին : Յիշեալ ազգերի մէջ հերոսացած, անժամ զործիչներէ կրանքից շատ հեռաքրքրի բաներ պատմանք ձեռուներն, իրան մտաշելի անմկական լեզուով, սրի համար յայտնեց ինձ իր խորին շնորհակալութիւնը : Անուհետեւ ես յարմար գտայ անցնելու հայկական բազմաշարձար ազգի հրատապ խնդիրներին և ասնկանայատաւում այժմեան արեւոյ կարգերին : Վերջինից հայերի նկատմամբ ես յայտնեցի, որ լաւ է ձեռք բերել ինքնաշարձարին, բայց պահանջում է զոնարկարտիսն : Այն, ոչ մի ազգ չէ եղել, որ իր համար անկախարտիսն ստեղծած լինէր առանց արհիսն թափելու : Այն մի ազգ աշխատում է ձեռք բերել իրաւունք, որ արդարութեան անապառ ժարդապետութեան փրիտափայտութիւնն է : Իրաւունքի վարդապետութեան շայն աշխարհի զարեւ սկզբնապատմանները եղել են, ԶՊՐԻՊՈՒՆՔ :

— « Ի՞նչ գո՛ւ, ձերուկ, զբաղել լինէ իր և թերթէ իր ազգերի ու կրօնների պատմութեան էջերը, այն ժամանակ իմ առածները քեզ հասկանալի կը լինէին : Բայց թողնե՛ք այդ, շտապե՛ք հասնել Պաղատան հանգստանալու, զիչերն արդէն մոտենում է » :

— « Անհոյ եղիր, աղա, ես քեզ այս գիշեր մի այնպիսի բարեսէր մարդ մօտ կը տանեմ հիւր, որ շնորհակալ կը լինիս ինձանից : Նա քեզ կը պատուաբերէ իր հոտեաս յարկի տակ և մանակից կ'անէ իր նախ անգանին : Նա առհասարակ, առանց խարութեան կրօնի և ազգի, աստա սէր է ցոյց առախ մանապարհօրդ աստականներին — « Աստուծոյ զօնազններին » :

— « Բայց շնորհակալ կը լինիմ մանուսանոյ, եթէ, սրերկա, վերջացնես Պաղատի մասին քո կիսատ պատմութիւնը, սրովհետեւ մենք ընդհատեցինք և միջանկիտ խօսակցութիւն անհեցանք » :

Գիւղացին նախ աշխատեց յուշարեքել իմանալու համար թէ պատմութիւնը ինչ տեղ է կարել, ապա շարունակել ոկսեց :

— « Հն՛, այն էի ասում, աղա, շրբաշակայ գիւղերից եկած մահմետականները Պարսից զորքի հետ սկսեցին նեղել ճնշել

ու կեղեցել խեղճ ժողովրդին: Ով ինչ բան կարողացաւ բարձել գրասենեքին, իսկ բաւ տացուածքի մնացեալ մասը որարան ծածուկ կերպով թաղեցին գետնի սակ: Բայց և այնպէս կորուսար զպալի էր մեծ չափով, շատ բան բոժին բնիս սանձարկակ, յանկուզն աւարտութեան և յափշտակութեան: Մինչև անգամ բահնամեքը զգտով որ իրանց էլ չեն փնայելու, շաւարով փակեցին Ջուղայից գութը դանուած և Պատուածածինն եկեղեցու դռները պինդ և բանալին ձգեցին Արարի մէջ: Նրանք էլ հետեւեցին նորահաստած ոչխար ժողովրդի օրինակին: Արարք գետի ափը հաւաքուել էր ժողովրդի աճապին խառնիճադանճ բազմութիւն: Այլ ժամանակին ինք՝ Շահ—Արասը եկել հասել էր Ջուղան և բանակ գիւղ Արարի հանդիպակաց ափին: Որպէս զի ցոյց ապ ժողովրդին թէ օղորմիլ, կարեկցել զխառ, հրամայեց իր պորպետներին անցնել Արարի միւս ափը նրան օգնելու և երկաթներով, սղախերով անցնանելու: Այն ինչ զօրպետները հաւանելի հայ ազգիկերանց և պատին էին արատաւ, յաւճ է կին առնում, ծեծում և շարարում էին երեխաներին, կանանց և ձեռքերին, ստանելով նրանց դէպ ի կարճատա, զէպ ի գրութիւն: Քանի բանի անսեղ տարածներ, վարանած Արարան անցնելիս, կատողի ալիքներին կուր եղան: Չսները թափուած ջրի մէջ ծփալով և ճշալով գնում էին նրա երեսին՝ անդապար ձեռքերը անայն կերպով տաբաժելով այս — այն կողմ, և որպիսեւ ըրազաւ ընդհանկութիւն չունէին՝ խորատուուած էին շատերը յորձանքներ մէջ և խեղչւում: Ի՞նչ լեզու կարէ պատուել, ի՞նչ զրէի կարէ նկարագրել մի առ մի այն ստակարի անասարանները, որ ներկայացնում էր այլ ժամանակ Արարը ներշնչուած մարդկութեան գիտամարմինների կատարեալ խառնակութիւններով և քառանկրով: Շահ—Արասը ժողովրդին առաջ տարաւ Գալիւճ, բայց նա նապարհին կարկտի, ձիւնափառն անձրևների և ցրտերի ընդունելով՝ Ջուղայեցի զպալի կաջառու ունեցան, նրանցից ամառը մեծան, ամառը հրաւորացան, ամառը էլ հազի տեղ հասան: Գալիւճից տեղափոխելով Սպահան՝

Շահ—Արասը հիւրը դրեց Նոր—Ջուղայի՝ և Հայերն այդտեղ Շահի հրամանով շինութիւններ ձգեցին, բնակութիւն հաստատեցին: Շահ—Արասը երկրորդ անգամ էլ ուղարկեց Հանիս թահմազուլի բեգին դէպ ի Ջուղա, երբ իմացաւ թէ այնտեղի շինութիւնները խալառուապա չեն այրուած և բնակիչներեց շատերը անտիկ ըստնրումն են թաղուած: Արարի հրամանը ստանալուն պէս թահմազուլի չորրը վերցրած օրընթաց արշաւանքով շէյաակի անապարեց Ջուղա, հրոյ ճարակ զարձրեց շինութիւնները, սրի անցկացրեց պատահած մնացեալ մարդկանց, իսկ որոնք կարողացել էին լեռներում թաղուել, նրանք ազատեցին միայն թահմազուլին, Ջուղան հիմնադրուակ աւերելուց յետոյ, վերջապէս վերայարձան Պարսկաստան: Շահ—Արասը այնուհետև, թէ և կեղծ և սնտի, չաւ դարձանք ու սեր էր ցոյց տալիս դէպ ի Նոր—Ջուղայի հայ համայնքը, որպիսեւ թանկ էր գտահատում այն շարարաները, այն նեղութիւնները, որ կարողացաւ Ջուղայից գաղթեցնել հայերին Սպահան: Մեծ ստուգունն անող, այնպիսիաստան Շահ—Արասից յետոյ՝ թաղաւորութեան պահ բարձրանող էր նրա թողը, Շահնֆի, որանից յետոյ երկրորդ Շահ—Արասը, որ շատ խիստ էր վարվում հայերի հետ, և ինչ ինչ պատճառներով ձուլում, գործնում էր նրանց մահմետական կրօնի ու . . . :

1. Նոր—Ջուղայի հայերի խնդրելով՝ Շահ—Արասը 1063 թուին ունիվերսիտեց բերել տառու ըրիներով Ազահան 12 հատ սրբատառ զար և Գրեգոր լուսաւորչի սուրբ տէր: Նոր—Ջուղալում մի փառահեղ տահար կանգնեց և Կիլ նրա մէջ ըրին: Բայց փրկելուպա կաթուղիկուր խանդակի տեղանքով փափազում էր կրկին իլլիֆանին բերել տալ Լուսաւորչի տէր: Նոր—Ջուղայեցիք մերում էին, յայտնելով, որ իրանք շրջապատուած են պարսիկ տարերով, ինչով ցոյց տան իրանց զբխառնեակառ Նշաւը: Վերջապէս կաթուղիկուսին յաջողում է խնդրուիլ թահմազուլի թաղաւորին, որի հրամանագրով և Մահաւարական կնքով բերուեցաւ ունիվերսիտեց:

Երեւոնին այստեղ վերջացրեց իր պատմութիւնը : Արդարեւ, այդ պատմութիւնը խոր տպագորութիւն թողեց ինչ որակ, և այդ զգացումը տպագորութեան տակ՝ յիշելով Ջուզպեցեցի պաղձման և գերութեան մասին արտասուրով շաղխուած մի ազգասէր Ստեփան վարդապետի հայրենասիրական ոգրը՝ ես սկսեցի բարձրամայն երգել :

Ափս՛ս քեզ հայոց խեղճիկ ժողովուրդ,  
Յիր ու ցամ ելաք ամսնդ, ամխորհուրդ.  
Գծրի գմամամ քը դէպ ի խորասամ՝  
Քաղցած ու ծարաւ, տըկւր, թշուառական :

Խտիւր ու խազար ցաւի դմացաք,  
Ձեր քաղցրիկ երկրէ՞մ ոտք դուրս չըլըաք.  
Խիմի ձեր խօր մօր գերեզմամ թողաք,  
Տըմերմ ու ժամերմ ուրիշի տուաք :

Ն՞մ սիրում դաշտերմ, մծծ միծ քաղաքմերմ,  
Քաղցրիկ շրեքմ, ձեր շէ՞մ գեղերմ,  
Ո՛ր՞մ քը թողմամ, դուք որ գմամամ քը.  
Նսպէս կը լինե՞ք, որ մոռամում քը :

Քանիւմ ամ է՞մպէս մտքերմուցը ըմկմի,  
Ինչքամ որ ողջ քը մտքերմուցը չըմկմի,  
Բարի ձեր որդոց, թոռամց պատմեցէք,  
Նսպէս խայրեմիք քամդած թողեցիք :

Մասիսի ամուծմ, Նոյս տապամի,  
Արարատ դաշտի, սուրբ չէմիածմի,  
Մեր թոր վիրապի, սուրբ Գեղարդ, Մուղմի  
Ձը՛ մոռմամ միմէ ի օրմ դատաստամի :

Աչքս կուրամար, շըլիմքս կուտուր  
Ին՞դն էայաստամ, քեզ էսպէս չը տեսէր,  
Թէ մեռած էի, իմ նրամի էր,  
Քամ թէ կնճգամի՞ աչքս բաց տեսէր :

Իմ ձայնից զմբմբայցին մօտակայ անդրն,  
դաճորերբ : Հեռու, հեռու տարածութեան  
մէջ արձագանք տուին լեռները :

— « Ապրի՛ս, աղա, շատ ապրիս, ձայնդ  
անսպան », — վրա բերեց գիւղացին :

Բայց այդ ժամանակ իմ ուշադրութիւնը

գրաւել էր մի աղքատ գաղթական, որ անցնելիս Ջուղայի մօտով՝ յանկարծ երկու կատաղած շներ յարձակման ենթարկուեց : Վրասանգն զգալով՝ նա ձեռքի փայտով աշխատում էր պահպանուել : Սակայն տեսնելով շները « կալ մէջ » արած, ուղրմ էին վրա վագել՝ ծուաաելու, յօշոտելու կամ պատառոտելու, վայրկենապէս նստեց գետնի վրա : Գաղթականը իրան յաղթահարուած ցոյց աւելով ուզեց զազանների օրտում զութ զարթեցնել. և արդարեւ շները կանգ առան գաղթականի անպաշտպանութեան ստաջ, մինչև որ մենք վրա հասանք և հալածեցինք նրանց : Գաղթական մարդը, ցնցոտիներէ մէջ, զոգտազցող շրթունքներով մօտեցաւ մեզ : Այդ արտանմիկ տեսարանը խելոյն պատկերացրեց իմ առաջ Տաճկահայաստանում հայերի կեանքից շատ տխուր գծեր : Կատաղած շներին նմանեցնելու տախլուցայ այն ֆրդերին և Տաճիկներին, սրունք իբրև ձրիակերներ, միշտ ապրում են կուտուրական, խաղաղ և աշխատասէր հայ ժողովրդի հայտով, և որոնք իրրեւ զազաններ՝ բռնութիւններ են զօրծ դնում՝ նրա այլ կերպ ապրիլ ճգտելոք հասար...  
— « Ե՛նորհակալ եմ, պարոն, ձեր ըրած բարերարութենէն՝ ազատելով խեղճիս կատաղած զազանների ճանկերից : Ո՛րոմութիւն, քաղցած եմ... » :

Արդարեւ, ես զթաշարժուեցայ խղճմբտանքը, որ մոռացութեան չէ մասնվում, այլ միշտ արթուն է լինում, թելալոբեց ինչ ազնիւ զգացումով առատօրէն վարձատրել թշուառ գաղթական մարդուն : Խեղճ, սասցի մտքումս, կարծում է թէ շներից ազատուելով՝ կարող է ազատուել և այն դաճնութեան բաժակներից, որ սպասվում է նրան օտար երկրում մինչև յատակը զատարկելու :

— « Ո՛ր երկրիցն ես » — հարցրի ես :

— « Վասպուրականցի » :

— « Ո՛ր կ'երթաս » :

— « Թիֆլիս, աղա, փարա վաստկելու » :

— « Ինչո՞ւ համար ես թողել քո հայրենիքը : քո ամբողջ փառքն ու քո ամբողջ սիրար » :

1. Սղահան, Պարսից երկրում, ուր գաղթեցնեցելով Հին-Ջուղայեցիներին՝ հեմք զրուեց Նոր-Ջուղայի :

— Ի՞նչ ընեմ, աղմ, մեր խօքին կը հանեն օսմանլին ու քիրդ. անոնք վերան շինեցին իմ սուննու տեղը, կնկանս հրապարակաւ անպատուեցին, զաւակունքս մթթութուեցին, քնչ ընէ ջրատարը :

Դեռ խօքը չը վերջացրած՝ երեսայի նըման սկսեց լալ :

— « Սրբիք արտասուքդ, ս՛վ հալածական, մի՛ յուսահատուիր, յուսահատութիւնը բարոյական մահ է : Մի՛ վախենար, կը գտնուին այն տեսակ մարդիկ, մեծահոգի բարերարներ, որ սրտիդ վշտեր և դառնութիւններ կը ճանաչեն և կ'ամօքեն : Լաւ է մացիր, որ « քշուստարիւնը թէ և փոթո-

րիկ է, որ խորտակում է, հողմ է, որ փչում է, բայց և այն բովն է, որից գուրս է զալիս հողին աւելի փայլուն և աւելի զեղեցկացած » : Այդ է ասում թշուառութեան մասին Դեկարտը՝... արիացիք և յոյսդ Աստուծուն ապաւինիր... » :

Շարայարելի

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԵԱՆՑ

1. Ժե՛րբ դարու հաշակաւոր Քրանտիացի փիլիսոփայ :

